ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

17.12.2018թ.

Նիստին մասնակցում էին՝ Ս. Գապոյանը, Մ. Մարինոսյանը
Գ. Դաշտոյանը, Գ. Ղարիբյանը, Վ. Ավետիսյանը, Ա. Յազերյանը,
Վ. Հակոբյանը, Ա. Մարուխյանը, Ա. Զանգեզուրյանը, Ա. Հովեյանը, Դ. Մազմանյանը
Գավառ համայնքի բնակիչներ

Նիստը վարող՝ քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյան
Նիստը արձանագրող՝ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարինե Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի հաստատման մասին:
2. Գավառ համայնքի 2018թ. բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
/զեկ. Տ. Բրսիկյան/
3. 2018թ. բյուջեի պահուստային ֆոնդից գումար տրամադրելու մասին:
/զեկ. Տ. Բրսիկյան/
4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքային համայնքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
/զեկ. Տ. Բրսիկյան/
5. Գավառ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին
/զեկ. Տ. Բրսիկյան/
6. Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/զեկ. Տ. Բրսիկյան/
7. Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակների, հաստիքացուցակների և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
/զեկ. Տ. Բրսիկյան/
8. Դրամական օգնություն տրամադրելու մասի::
/զեկ. Վ. Խաչատրյան/
9. Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց N14 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
/զեկ. Ա. Գևորգյան/
10. Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց N12 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
/զեկ. Ա. Գևորգյան/
11. Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին

Հարց 1.

ՈՐՈՇՈՒՄ 105. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Գավառ համայնքի ավագանին միաձայն քվեարկությամբ որոշում է հաստատել նիստի օրակարգը:

Կողմ՝ (8) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 2.

ՈՐՈՇՈՒՄ 106. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին<< ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների, ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5) կետի, 38-րդ հոդվածի 1) կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած Գավառ համայնքի <<Կենտրոնական Հրապարակի լուսասյուների, նստարանների, ժամացույցի և աղբարկղերի տեղադրում>> ծրագիրը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի 2018թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 1/ Գավառ համայնքի բյուջեի եկմատային մասում պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/ տողը ավելացնել ծրագրի ընդհանուր արժեքի՝ 60545680 /վաթսուն միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր ութսուն/ ՀՀ դրամ գումարի 40%-ի չափով, որը կազմում է 24218300 /քսանչորս միլիոն երկու հարյուր տասնութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:
   2/ Ծախսային մասը՝ 08 բաժնի 6 խմբի 1 դասի /հանգիստ, մշակույթ և կրոն /այլ դասերին չպատկանող// գործառնական դասակարգման 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ տնտեսագիտական հոդվածը ավելացնել 24218300 /քսանչորս միլիոն երկու հարյուր տասնութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամով՝ Գավառ համայնքի <<Կենտրոնական Հրապարակի լուսասյուների, նստարանների, ժամացույցի և աղբարկղերի տեղադրում>> ծրագրի շրջանակներում լուսասյուների, նստարանների, ժամացույցի և աղբարկղերի ձեռք բերման համար:
2. 01 բաժնի 3 խմբի 3 դասի /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ գործառնական դասակարգման 4111 /աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամով, իսկ 4212 /էներգետիկ ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածը պակասեցնել 45000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամով: Պակասեցված գումարները՝ ընդամենը 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ ավելացնել նույն գործառնական դասակարգման 4214 /կապի ծառայություններ/ տնտեսագիտական հոդվածին:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 3.

ՈՐՈՇՈՒՄ 107. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Վ. Ավետիսյանը, Ս. Ամիրխանյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 90-րդ հոդվածի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի 2018 թ. բյուջեի պահուստային ֆոնդից.

1. 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել ընդամենը 550000 /հինգ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ դրամական օգնություն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող Գավառ համայնքի հետևյալ բնակիչներին՝
   Պիպոյան Գոհար – 200 000 /երկու հարյուր հազար/ՀՀ դրամ
   Կոտոլկյան Ալվարդ – 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ
   Թամամավեյան Տաթևիկ – 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ
   իրենց ուսման վարձերը մասնակի վճարելու համար:
2. 4861 /այլ ծախսեր/ տնտեսագիտական հոդվածով տրամադրել ընդամենը 350 000 /երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ, որից

   1/ 100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ ,,Արամ Խաչատրյան'' համերգասրահում դեկտեմբերի 19-ին կայանալիք Գոհար Խաչատրյանի մենահամերգի 20 տոմս ձեռք բերելու համար:

   2/ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ ,,Ռազմիկ՛՛ թատերական հիմնադրամի

   կողմից դեկտեմբերի 24-ին Գավառի մշակույթի տանը կայանալիք ,,Բուրատինոյի նոր արկածները՛՛ ամանորյա ներկայացմանը աջակցելու նպատակով:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 4.

ՈՐՈՇՈՒՄ 108. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Մարուխյանը Վ. Հակոբյանը

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18), 38-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետերի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների դրույթներով, առաջարկվում է

1.Սահմանել 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ ըստ հավելվածներ 1-ի և 2-ի

2.Գավառի համայնքապետարանի ենթակայության արտադպրոցական կրթություն մատուցող կազմակերպությունների ծառայություններից օգտվող համայնքի բնակչության նշված սոցիալական խմբերի համար սահմանել հետևյալ արտոնությունները

2.1.Երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, մանկատան սաներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ երեխաներին ազատել վարձավճարից:

2.2. Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար սահմանել զեղչ 50%-ի չափով:

3. Մանկապարտեզների սաների հաճախումների բացակայությունների դեպքում, բացակայած օրերի համար վարձավճար չի գանձվում, եթե ծնողը ներկայացրել է բժշկի կողմից տրված տեղեկանք երեխայի հիվանդության վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել Գավառ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 7 նիստի թիվ 46-Ն որոշումը, բացառությամբ որոշմամբ հաստատված տեղական վճարների 9-րդ կետի, որը գործում է մինչև 01.09.2019թ.:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 01-ից, բացառությամբ որոշմամբ հաստատված հավելված 2-ի 11-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի 01-ից:

Հավելված 1

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԱՅԴ ԹՎՈՒՄ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ	ՍՀՄԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ
1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սհմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար		
Հիմանական շենքերի և շինությունների համար՝		
1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝15000 դրամ	15000	4500
2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝		
ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ	30000	9000

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ	50000	15000
գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ	50000	15000
դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝100000 դրամ	100000	30000
3) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝		
ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ	3000	900
բ.20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ	5000	1500
2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույտվության համար, եթե սահմանվաշ կարդով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝		
1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոռծառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ	3000	900
2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վենակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոռծառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մասի ավելացման կամ շենքերի գոռծառական նշանակության փոփոխության մասով		
3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակռույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ն կետով սահմանված նորմերը		
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ	5000	1500
4. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար 100000 դրամ	100000	100000
5. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբեկտներում	20000	20000

տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար 20000 դրամ		
6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար 50000 դրամ	50000	50000
7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝		
1) ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001 դրամ	0-10001	1000
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ	10001-13001	10001
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ	13001-20001	13001
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ	20001-25001	20001
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ	25001-45001	25001
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 դրամից մինչև 100001 դրամ	45001-100001	45001
2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001 դրամ	0-10001	1500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ	10001-13001	10001
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ	13001-20001	13001
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ	20001-25001	20001
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ	25001-45001	25001
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 դրամից մինչև 100001 դրամ	45001-100001	45001
8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար	350	350

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար		
1) առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ	5000-50000	5000
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ	25000-100000	25000
3) բաղնիքների (սաունաներին) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ	200000-500000	200000
4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ	500000-1000000	500000
5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ	250000-500000	250000
6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ	100000-150000	100000
10. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝		
1) հիմնական շինությունների ներսում		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5001 դրամ	0-5001	2500
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5001 դրամից մինչև 10001 դրամ	5001-10001	5001
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10001 դրամից մինչև 15001 դրամ	10001-15001	10001
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15001 դրամից մինչև 20001 դրամ	15001-20001	15001
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝20001 դրամից մինչև 30001 դրամ	20001-30001	20001
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝30001 դրամից մինչև 50001 դրամ	30001-50001	30001
2) ոչ հիմնական շինությունների ներսում		
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1001 դրամ	0-1001	1000
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1001 դրամից մինչև 2001 դրամ	1001-2001	1001
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2001 դրամից մինչև 4001 դրամ	2001-4001	2001
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4001 դրամից մինչև 8001 դրամ	4001-8001	4001
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝8001 դրամից մինչև 15001 դրամ	8001-15001	8001
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝15001 դրամից մինչև 25001 դրամ	15001-25001	15001
11. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և		

պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝		
1) ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ	2000	2000
2) թունդ ալկահոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ	3500	3500
3) սոցիալական գովազդի համար զրո դրամ	0	0
4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ	1500	1500
5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 տոկոսի չափով	375	375
6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 տոկոսի չափով	150	150
12. ՀՀ համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ	100000	100000
13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ	10000	10000
14. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազարից մինչև երեք հարյուր հազար դրամ.	50000-300000	50000

Ծանոթություն. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը որպես ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդկրկված բարձր լեռնային համայնք՝ հաշվարկվել են 0.3 գործակցի կիրառմամբ

Հավելված 2

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓ
1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5000
3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝	5000

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	
4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	2000
5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ մասնակցության վճար	Մեկնարկային գնի 1%-ի չափով, ոչ պակաս 2000 դրամից
6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	
1) օտարման տրամադրման դեպքերում	35000
2) Կառուցապատման իրավունքով տրամադրման դեպքերում	2000
3) հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքերում	2000
7. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	2000
8. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար համայնքի ավագանու կողմից սահմանվում է ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում	Բնակելի նշանակության շենքերի կամ շինությունների կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսեկան 200 ՀՀ դրամ
9. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում: Սույն կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածն որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում տեխնիկական աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով	1) ըստ ծավալի՝ 1մ³ աղբի համար՝ 3000 ՀՀ դրամ 2) ըստ զանգվածի՝ 1տ աղբի համար՝ 10000 ՀՀ դրամ
1) Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների մասով՝	1քմ համար 50 ՀՀ դրամ, բայց ոչ պակաս 1000 ՀՀ դրամից
2) Հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝	1քմ համար 25 ՀՀ դրամ
3) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝	1քմ համար 5 ՀՀ դրամ
4) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝	1քմ համար 3 ՀՀ դրամ
10. Համյնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով	1. Գավառ համայնքի բնակիչ 1 սանի համար՝ ամսեկան 5000 ՀՀ դրամ 2. Այլ համայնքի բնակիչ 1 սանի համար՝ ամսեկան 10000 ՀՀ դրամ
11. Համյնքային ենթակայության արտադպրոցական	1.Գավառ համայնքի բնակիչ

դաստիրակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով	յուրաքանչյուր անձի համար ամսեկան 1) ,,Գավառի մարզադպրոց,, ՀՈԱԿ - 3000 ՀՀ դրամ 2) ,,Գավառի ուսուցողական կենտրոն ՀՈԱԿ ա. հեյլունագործության խմբակ – 2000 ՀՀ դրամ բ. Մնացած խմբակների համար -3000 ՀՀ դրամ 3) ,,Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ ա. մակրամեի և ձեռարվեստի խմբակներ – 2000 ՀՀ դրամ բ. Մնացած խմբակների համար -3000 ՀՀ դրամ 4) ,,Գավառի երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ-3500 ՀՀ դրամ 5) ,,Գավառի արվեստի դպրոց,, ՀՈԱԿ ա. թատերական և գեղարվեստի բաժիններ – 3000 ՀՀ դրամ բ. Մնացած բաժինների համար -3500 ՀՀ դրամ 6) ,,Գավառի՝ Գևորգ Դաբաղյանի անվան դուդուկի մասնագիտացված երաժշտական դպրոց,, ՀՈԱԿ - 4000 ՀՀ դրամ 2. Այլ համայնքի բնակիչ յուրաքանչյուր անձի համար՝ ամսեկան 5000 ՀՀ դրամ
12. Համայնքի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար	1000 դրամ
13. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց յութաքանչյուր մեկ միավորի համար՝ յուրաքանչյուր միջոցառման ժամանակ	100 դրամ
14. Համայնքի տարածքում անշարժ գույքի հասցեի տրամադրման համար	1000 դրամ

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 5.

ՈՐՈՇՈՒՄ 109. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Գապոյանը, Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11), 28-րդ հոդվածի 4) կետերի դրույթներով և հաշվի առնելով Գավառ համայնքի մշտական բնակչության թիվը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ /29146 մարդ/, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Գավառ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ՀՀ ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի 40.1 տոկոսի չափով՝ 265200 /երկու հարյուր վաթսուն հինգ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ՝ (8) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 6.

ՈՐՈՇՈՒՄ 110. ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ա. Զանգեզուրյանը, Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28), 34-րդ հոդվածի 3-րդ մասի 4) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի

2.Հաստատել Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայնN1 հավելվածի

Հավելված N 1

Գավառ քաղաքային համայնքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 7 նիստի 110 որոշման

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Իրավատնտեսագիտական բաժին
2. Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Գավառի տարածքային բաժին

Հավելված N 2

Գավառ քաղաքային համայնքի ավագանու

2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 7 նիստի 110 որոշման

ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 41 աշխատակից
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	***ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ***	***ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉՔՔ*** /սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար/
1	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ	1	212100
2	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ	1	100000
3	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ	2	100000
4	ՄԱՄԼՈ ՔԱՐՏՈՒՂԱՐ	1	72752
5	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	1	98000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
6	ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	1	188000
ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ			
7	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	130000
8	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
9	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
10	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
11	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺԻՆ			
12	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	130000
13	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
14	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
15	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000
16	ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	98000

17	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
18	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
19	ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ	1	87000
ՏԵԽՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
20	ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐ	2	80000
21	ՕՊԵՐԱՏՈՐ	1	72752
22	ԳՈՐԾԱՎԱՐ	1	75000
23	ՏՆՏԵՍՎԱՐ	1	72752
24	ՎԱՐՈՐԴ	2	75000
25	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	72752
26	ՊԱՀԱԿ	5	72752
ՀԱՄԱՅՆՔՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺ			
27	ԱՆԱՄՆԱԲՈՒՅԺ	4	72752
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԳԱՎԱՌԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ			
28	ԲԱԺՆԻ ՊԵՏ	1	284000
29	1-Ն ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ	2	136000
	ԸՆԴԱՄԵՆԸ	41	

Ծանոթություն.

1. Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Գավառի քաղաքապետարանի աշխատակազմի իրավատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-14/ պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար՝ ամսեկան 32000 ՀՀ դրամի չափով:

2. 1974 թ. հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների դրույքաչափը սահմանել 77904 ՀՀ դրամ:

Կողմ՝ (8) Դեմ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 7.

ՈՐՈՇՈՒՄ 111. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ս. Ամիրխանյանը, Ս. Գապոյանը

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28) և 35-րդ հոդվածի 1-ին մասի 7) կետերի դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Գավառ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը:

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
3	ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ	0.5	1	72752
4	ԴԱՍՏԻԱՐԱԿ	3	3	72752
5	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.75	1	72752
6	ԵՐԱԺԻՇՏ	0.75	1	72752
7	ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	3	3	72752
8	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
10	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	12	14	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
4	ԴԱՍՏԻԱՐԱԿ	4	4	72752
5	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.75	1	72752
6	ԵՐԱԺԻՇՏ	1	1	72752
7	ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	4	4	72752

8	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
10	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	14.75	16	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
4	ԴԱՍՏԻԱՐԱԿ	3	3	72752
5	ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	3	3	72752
6	ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ	1	1	72752
7	ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՕԳՆԱԿԱՆ	0.5	1	72752
8	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.75	1	72752
9	ԵՐԱԺԻՇՏ	1	1	72752
10	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
11	ԽՈՀԱՐԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ	1	1	72752
12	ՀՈԳԵԲԱՆ	0.5	1	72752
13	ԼՈԳՈՊԵԴ	0.5	1	72752
14	ՊԱՀԱԿ	1	1	72752
15	ԴՌՆԱՊԱՀ	1	1	72752
16	ՀԱՎԱՔԱՐԱՐ	0.5	1	72752
17	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	17,75	21	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000

2	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
3	ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ	1	1	72752
4	ԴԱՍՏԻԱՐԱԿ	4	4	72752
5	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.75	1	72752
6	ԵՐԱԺԻՇՏ	1	1	72752
7	ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	4	4	72752
8	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
9	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
10	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	14.75	16	

ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՄԵԹՈԴԻՍՏ ՈՒՍ. ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ	0.5	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
4	ԴԱՍՏԻԱՐԱԿ	3	3	72752
5	ԲՈՒԺՔՈՒՅՐ	0.75	1	72752
6	ԵՐԱԺԻՇՏ	0.75	1	72752
7	ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՕԳՆԱԿԱՆ	3	3	72752
8	ԽՈՀԱՐԱՐ	1	1	72752
9	ՏՆՏԵՍՎԱՐ	0,5	1	72752
10	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	12	14	

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՏՆՕՐԵՆԻ ՕԳՆ	0.5	1	72752
3	ՄԵԹՈԴԻՍՏ	0.5	1	72752

4	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	0.5	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
7	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	7	

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
3	ՄԱՏԵՆԱԳԵՏ	2	2	72752
4	ԱՌԱՋԱՏԱՐ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ	3	3	72752
5	ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐՆԵՐ	6	6	72752
6	ՕՊԵՐԱՏՈՐ	1	1	72752
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
8	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ	1	1	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	18	18	

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
4	ՊԱՀԱԿ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
7	ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ	138 ժամ 5.75 դրույք	8	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	11.75	14	

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	95000
2	ՄԵԹՈԴԻՍՏ	1	1	72752
3	ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ	1	1	72752

4	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	1	1	72752
7	ԽՄԲԱԿԱՎԱՐՆԵՐ	138 ժամ 5.75 դրույք	6	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	11.75	12	

ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	112000
2	ՈՒՍՄԱՍՎԱՐ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	82000
4	ԲՈՒԺՔՈՒՅՐ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
7	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
8	ԴՌՆԱՊԱՀ	1	1	72752
9	ՊԱՀԱԿ, ՀՆՈՑԱՊԱՀ	1,5	1	72752
10	ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ	1	1	72752
11	ՄԱՐԶԻՉՆԵՐ	320 ժամ 13 դրույք	10	72752
	ԸՆԴԱՄԵՆԸ	24.5	21	

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	112000
2	ՈՒՍՄԱՍՎԱՐ	1	1	72752
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	82000
4	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	72752
5	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	72752
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	72752
7	ՊԱՀԱԿ	1	1	72752
8	ԴԱՍԱՏՈՒ	427 ժամ 17.8 դրույք	23	89000
	ԸՆԴԱՄԵՆԸ	25.8	31	

ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	**112000**
2	ՈՒՍՄԱՍՎԱՐ	1	1	**72752**
3	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	**82000**
4	ԿԱՋՄԱԿԵՐՊԻՉ	1	1	**72752**
5	ԳՈՐԾԱՎԱՐ	1	1	**72752**
6	ՀԱՎԱՔԱՐԱՐ	2	2	**72752**
7	ՏՆՏԵՍՎԱՐ	1	1	**72752**
8	ՀԱՆԴԵՐՁԱՊԱՀ	1	1	**72752**
9	ՊԱՀԱԿ	2	2	**72752**
10	ԴԱՍԱՏՈՒ	503 ժամ 21 դրույք	25	**89000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	32	36	

,,ԳԱՎԱՌԻ՝ Գ. ԴԱԲԱՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ՝ ԴՈՒԴՈՒԿԻ ՄԱՄՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ" ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	**95000**
2	ՀԱՇՎԱՊԱՀ	0.5	1	**72752**
3	ԴԱՍԱՏՈՒ	83 ժամ 3.5 դրույք	4	**89000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	5	6	

,,ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ" ՀՈԱԿ

N	ՊԱՇՏՈՆԸ	ԴՐՈՒՅՔԸ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ	ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ
1	ՏՆՕՐԵՆ	1	1	**203000**
2	ՀԱՇՎԱՊԱՀ	1	1	**105000**
3	ՕՊԵՐԱՏՈՐ	1	1	**99000**
4	ՄԵԽԱՆԻԿ	1	1	**78000**
5	ԲԱՆՎՈՐ	8	8	**111000**
6	ՎԱՐՈՐԴ	7	7	**111000**
7	ԷԼԵԿՏՐԻԿ	1	1	**73000**
	ԸՆԴԱՄԵՆԸ	20	20	
	ՀՍԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՂ		3	

Հսկիչ շրջագայողների ամսեկան աշխատավարձի չափը սահմանել տվյալ ամսվա ընթացքում ֆիզիկական անձանցից հավաքագրված վարձավճարի գումարի 25 տոկոսի չափով:

Ծանոթություն .

1. 1974 թ. հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների դրույքաչափը սահմանել 77904 ՀՀ դրամ:
2. <<Արվեստի դպրոց>> և <<Երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ների հանրապետության այլ բնակավայրերից ժամանող դասատուներին վճարել հավելավճար, որպես ճանապարհածախսի փոխհատուցում՝ յուրաքանչյուր հաճախած օրվա համար 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՐՑ 8.

ՈՐՈՇՈՒՄ 112. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Գ. Դաշտոյանը

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով ,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ և 13-րդ հոդվածի 10-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 21.08.2017թ. թիվ 5 նիստի թիվ 36 որոշման 4-րդ մասի պահանջները, 4729 /այլ նպաստներ բյուջեից/ տնտեսագիտական հոդվածը, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Գավառ համայնքի Նալբանդյան փողոց տուն 6 հասցեի բնակիչ, 2-րդ խմբի հաշմանդամ Գևորգ Աֆրիկյանին, որը մասնակցել Վրաստանի Հանրապետությունում Եվրոպայի առաջնության պարալիմպիկ ձևով մրցումներին և զբաղեցրել 1-ին տեղը, տրամադրել 100000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ՝ կեցության ծախսերին աջակցելու նպատակով:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 9.

ՈՐՈՇՈՒՄ 113. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ N 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Ա. Զանգեզուրյանը

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին՛՛ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 21) կետի, ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ, 62-րդ և 66-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 14 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N28112018-05-0024/ 05-001-0384-0033 կադաստրային ծածկագրով, 37,7 /երեսունյոթ ամբողջ յոթ տասնորդական/ ք.մ. մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու հողամասի վրա առկա ավտոտնակի սեփականատեր Սամվել Խաչատուրի Դադոյանին՝ որպես ավտոտնակի զբաղեցրած և սպխասարկման համար նախատեսված հողատարածք:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 10.

ՈՐՈՇՈՒՄ 114. ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ԲՈՇՆԱՂՅԱՆ ՓՈՂՈՑ N 12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ Վ. Ավետիսյանը

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին՛՛ ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի և 18-րդ հոդվածի 21) կետի, ՀՀ հողային օրենսգրքի 31-րդ, 62-րդ և 66-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ Գավառ քաղաքի Բոշնաղյան փողոց թիվ 12 հասցեում գտնվող, Գավառ համայնքի սեփականություն հանդիսացող /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N19112018-05-0061/ 05-001-0384-0043 կադաստրային ծածկագրով, 34.7 /երեսունչորս ամբողջ յոթ տասնորդական/ ք.մ. մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարելու հողամասի վրա առկա ավտոտնակի սեփականատեր Արսեն Խաչիկի Ռուբինյանին և Արևիկ Ստյոպայի Ստեփանյանին՝ որպես ավտոտնակի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված հողատարածք:
2. Հողամասի վաճառքի գին սահմանել 1ք.մ.-ի համար 1242 /մեկ հազար երկու հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրը:

Կողմ՝ (8) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (0)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հարց 11.

ՈՐՈՇՈՒՄ 115. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Գույքահարկի մասին" ՀՀ օրենքի 15 հոդվածի 3 կետի, և ,,Տեղական Ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 18 հոդվածի 42) կետի դրույթներով, նկատի ունենալով, որ ներքոհիշյալ կազմակերպությունները վճարել են իրենց շենքերի և շինությունների գույքահարկի և հողի հարկի մայր գումարները, Գավառ համայնքի ավագանին որոշում է

Համաձայնություն տալ կից ցուցակով ներկայացված անձանց /հավելված 1/ և ստորև ներկայացված կազմակերպությունների նկատմամբ սահմանել հարկային արտոնություն.

Հ/Հ	ՀՎՀՀ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ	ՏՈՒՅԺ
1	08413852	<<ԳԱՎԱՌՏՐԱՆՍ>> ՍՊԸ	շին.	139 957
2	08415581	ՂԱԶԱԶՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ	շին.	13 099
3	08417605	<<ԵՐՅՈՒՆԱ>> ՍՊԸ	շին. հող	26 438 10 135
4	08407328	<<ԳՈՌ>> ՍՊԸ	շին.	26 192
5	08405125	<<ԱՐԱ-ՆԱՆԵ>> ՍՊԸ	շին. հող	448 607 1382

Կողմ՝ (7) Դեմ ՝(0) Ձեռնապահ՝ (1)

ԱՐԱՄ ՅԱՋԵՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ

ԱՐՏԱԿ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

ՍՎԵՏԼԱՆԱ ԳԱՊՈՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ